ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«30» 04 2026թ.
№ ԿԱԱՆ2/1971

Եվրոասֆալտ ՓԲԸ /ՀՎՀՀ 02285123/
ՀՀ, ք. Աշտարակ, Երևանյան 106/1
էլ. փոստի հասցե՝ info@euroasphalt.am
Հեռ.՝ +374 98 41 50 30

ՀՀ պաշտպանության նախարարության և Եվրոասֆալտ ՓԲԸ միջև 14.11.2025թ. կնքված N ՀՄԱԱՇՁԲ-25-20/2-2 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում /Համաձայնագիր թիվ 2 առ. 04.02.2026թ./ Եվրոասֆալտ ՓԲԸ-ն պետք է կատարեր 153641758.05 ՀՀ դրամի աշխատանքներ մինչև 30.04.2026թ: Ընկերությունը 25.03.2026թ. դրությամբ կատարել է 20485567.74 ՀՀ դրամի աշխատանք, որից հետո աշխատանք չի կատարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը՝ (խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը) ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.04.2026թ.-ին միակողմանի մասնակի լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ Եվրոասֆալտ ՓԲԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 768209 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 5.2 կետի համաձայն) և 266312 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 5.3 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 31.03.2026թ. ներառյալ: Ինչպես նաև Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 15364800 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 49094400 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե մինչև 2026թ. մայիսի 8-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 15364800 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 49094400 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա Եվրոասֆալտ ՓԲԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2026թ. մայիսի 8-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2075 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարերը Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Հարգանքով՝

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ